ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

16.03.2023թ. Սևան համայնք

2023թ. մարտի 16-ին ժամը 12.00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ: ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով /երկրորդ փուլ/, «Արխիտոն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում **««ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԼՃԱՇԵՆ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ»** հիմնադրութային փաստաթղթի երկրորդ հանրային քննարկման վերաբերյալ:

Հանրային քննարկման ներկա էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն»ՊՈԱԿ-ի մասնագետները, քաղաքաշինության կոմիտեի, Գեղարքունիքի մարզի մարզպետարանի ներկայացուցիչները, Ձեռնարկողը և համայնքի ներկայացուցիչները՝ հիմնականում տնտեսվարողներ:

Հանրային քննարկման նպատակը ներկայացրեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն»ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Արմինե Վարդանյանը, նշելով որ նախորդ հանրային քննարկումների ընթացքում չի հաջողվել հանգիստ և կոնստրուկտիվ բանավեճ ծավալել, ներկայացնել հայտով նախատեսված նախագծային լուծումները, փոփոխությունները:

Հանրային քննարկմանը ներկա գտնվող մասնակիցներն, որոնք հիմնականում Սևանա լճի առափնյա հանգստյան գոտու տնտեսվարողներն էին, ինչպես նախորդ հանրային քննարկումների ժամանակ, աղմուկ բարձրացրեցին, պահանջելով կառավարության ներկայացուցիչներին՝ իրենց հուզող հարցերի պատասխանները ստանալու նպատակով: Տնտեսվարողները և համայնքի բնակիչները դեմ էին, քանի որ հայտով ներկայացված նախագծային լուծումները բախվում են իրենց տնտեսական շահերի հետ, ներառում են իրենց տարածքները, որտեղ կատարվել են ներդրումներ, ստեղծվել են աշխատատեղեր: Իսկ

նախագծի իրականացման արդյունքում տնտեսվարողները կզրկվեն իրենց ֆինանսական միջոցներից, իսկ բնակչությունը աշխատատեղերից:

Քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցիչ Հովիկ Դավթյանը փորձեց պատասխանել հանրային քննարկման մասնակիցների հուզող հարցերին, սակայն տնտեսվարողները կոնկրետ փոխհատուցման լուծումներ էին պահանջում կամ այլընտրանք էին առաջարկում՝ նախագիծը Սևանա լճի այլ ափամերձ տարածքներում իրականացնել:

Հանրային քննարկման ընթացքում մասնակիցներին մտահոգող հարցերին պատասխան չտրվեց՝ իրենց ենթակայության տակ գտնվող կառույցների ճակատագրի, ինչպես նաև նախագծի իրականացման դեպքում փոխհատուցման մեխանիզմներ վերաբերյալ: